

Տեսակէ ծախուց.

— 1.

Տարեկան ծախս Դպրոցին սկսեալ ի 1-էն Յու-
լիսի 1872 ամի ց 1-ն Յուլիսի 1873 ամի՝ այն է՝

Ռոճիկը ուսուցչաց, վերակացուի Դրպ-
րոցին եւ Ծխական դատատան . . . 2451 53

Ռոճիկը Ատենադարի, գրադրի Հոգա-
բարձութեան դպրոցին եւ Վերատեսչի
վանքապատկան կալուածոց եւ ծառային . . . 425

Վարձատրութիւնը, տուեալը գործա-
կալացն Վարանդու եւ Զրարերդու եւ
Շուշի քաղաքի վասն ժողովելոյ նոցա
զդպրոցապատկան արդիւնն . . . 83

Սննդադրամը, տուեալը միաբանաց
Վանօրէից Շուշոյ գաւառի . . . 304 7

Դիւանական ծախս ի պէտս Դպրոցին
Վարձ տան ի պէտս զետեղման ծը-
խական դատատան . . . 34 26

Անհրաժեշտ ծախս ի պէտս Դպրոցին . . . 52 20

Վարձ տպագրութեան զանազան թեր-
թից, ցուցակաց եւլն. ի պէտս Դպրոցին . . . 55 30

Դրամը, տուեալը ի զին դրուագաւոր
թղթոց եւ ի բաժ յօգուտ Նատարիօսին
վասն վաւերացուման կապալադրոյ ի
մասին կալուածոց վանօրէից . . . 78 90

Դրամը նուիրեալը ի Տէր Սարգիս
Արքեպիսկոպոսէն առ ի գործադրու-
թիւն ի վերայ շինութեան Օրիորդաց
Դպրոցին: . . . 230

Դրամը տուեալը հաւատարմաց ի
կողմանէ Հոգեւոր տեսչութեան ի պէտս
ծախուց ցանապարհի եւ ի վարձ մշա-
կաց ըստ երկրաչափական գործողու-
թեանց ի վերայ վանքապատկան կա-
լուածոց . . . 742

Գումարն ծախուց 4755 80

Զորս հանեալ ի վերոյգրեալ մտից
գումարոյն՝ մնայ առ 1-ն Յուլիսի
1873 ամի առձեռն պատրաստի գու-
մար դպրոցին . . . 18646 23 1/4

Ծանօթ. — Գոն այլ եւս դպրոցապատկան մեծ եւ
փոքր գումարը դրամոց ի նախանցեալ ժամանակաց

մնացեալը ի վերայ զանազան անձանց, զորոց Հոգա-
բարձութիւնս հոգ տանի առ ի ստանալ:

Անդամ Զ Զեմեմարի-Էմեմ.

Սիմէոն Քահանայ Տէր Իսրայէլեանց

Յովհաննէս Քահանայ Միաբնակեանց

Յակոբ Մ. Շահնազարեանց

Զաքարիա Աղամալեանց

Գրիգոր Ղուլիեանց

Ատենադար Ս. Հասանջալեանց:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՅԻ ԱՅՅԵԼՈՒՔ.

Ի 24-ն ամսոյս Պարսից Հինգերորդ
բանակի Հրամանատար եւ մեծ Լեւադքոսի
եղբայր Վսեմ. Նասրուլահ խանն (Նաս-
րալի-մուլէ), — որ Օգոստ. 7-էն ու-
ղեկիցներէն է, — Պարսկաստանի հեռա-
գրաց ընդհանուր վերատեսուչն եւ Հա-
յազգի Մեծ. Նատուր խանն ի Տփիսի-
սէն յատկապէս ի Մայր Աթոռս ի Ս.
Լիւթիմաճին եկին Վսեմ. Հայրապետի
հետ տեսնուելոյ համար:

Նորին Արքութիւն ի Բիւրական լինե-
լով, յիշեալ այցելութ Մայր Աթոռոյս
նշանաւոր տեղերը տեսին եւ ճաշ վայելե-
ցին, եւ ընդամենն չորս ժամու չափ միջո-
ցաւ մնալով աստ՝ ընդ երէկս վերադար-
ձան յԵրեւան՝ անտի դէպ ի Ղալիէթ
ուղեւորելոյ համար:

ԱՆԳՂԻՍՏԻ ԱՅՅԵԼՈՒՔ.

Ի 29-ն ամսոյս՝ Ենգղիոյ Ազգային Ժո-
ղովոյ անդամ Վսեմ. Երթիւր Քին-
ներաւ եւ իւր որդին յատկապէս Ս. Լիւ-
թիմաճին այցելեցին:

Նոցա ի պատիւ Տփիսիսէն ուղեկից էր
Այսս. Առաւմարութեան կողմանէ Արվ-

